ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/41210-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-905-29.08.2024,17.10.2024-ԱռՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար.

1. Առաջարկում ենք օրենքի նախագիծը լրացնել նոր 1-ին հոդվածով՝ գործող օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնելով նոր՝ 69-րդ կետով.

«Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 69-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«69) Հայաստանի Հանրապետության արագ արձագանքման բժշկական խումբ՝ արտակարգ իրավիճակներում գործող, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, ինքնաբավ և հատուկ պատրաստություն անցած մասնագիտական խումբ.»:»

Ըստ այդմ հոդվածների համարակալումը վերանայվել է:

2. 1-ին (խմբագրված 2-րդ) հոդվածում՝

ա. «5-րդ մասում՝» բառերը համարակալել որպես 1-ին կետ,

բ. առաջին նախադասությունը առաջարկում ենք խմբագրել հետևյալ բովանդակությամբ և համարակալել որպես «ա.» ենթակետ՝

«ա. «Հիվանդանոցային» բառից հետո լրացնել «և արտահիվանդանոցային» բառերը, իսկ «հնարավորությունները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև բժշկական օգնության եւ սպասարկման որոշ տեսակների մասնագիտական առանձնահատկություններով պայմանավորված լիազոր մարմնի կողմից սահմանված պահանջներ» բառերը.»

գ. «2)» կետը համարակալել որպես «բ.» ենթակետ,

«2)»-րդ կետի՝ խմբագրված որպես «բ.» ենթակետի երկրորդ պարբերությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

«Հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում լիազոր մարմնի կողմից սահմանված տեսակների բժշկական օգնության և սպասարկման իրականացմանը ներկայացվող պահանջները՝ ըստ մակարդակների, սահմանում է լիազոր մարմինը:».»,

դ. առաջարկում ենք գործող օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասում կատարել լրացում՝ նախագծի 2-րդ հոդվածը լրացնելով նոր 2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«2) 6-րդ մասում «ինչպես նաև հիվանդանոցային» բառերից հետո լրացնել «և արտահիվանդանոցային» բառերը:»

3. Առաջարկում ենք գործող օրենքի 35.1-ին հոդվածի 4-րդ մասից հանել «լիազոր մարմնի ձևավորած» բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը համաձայն որի՝ Նորմատիվ իրավական ակտերում բացառվում են իրավական նորմերի անհիմն կրկնությունները և ներքին հակասությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը նախագծի 2-րդ (խմբագրված 3-րդ) հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 3. Օրենքի 35.1-ին հոդվածի՝

1) 3-րդ և 4-րդ մասերում «լիցենզավորող հանձնաժողովի» բառերը փոխարինել «քննական հանձնաժողովի» բառերով,

2) 4-րդ մասից «լիազոր մարմնի ձևավորած» բառերը հանել:»:

4. Առաջարկում ենք նախագծի 3-րդ (խմբագրված 4-րդ) հոդվածի

ա. Վերնագրում «42.2-րդ հոդվածից հետո» բառերը հանել՝ իրավաբանական տեխնիկայի ճիշտ կիրառման անհրաժեշտությունից ելնելով:

բ. 3-րդ մասում նշված «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը

փոխարինել «Կառավարություն» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

5. 4-րդ (խմբագրված 5-րդ) հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:»:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ